

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
7 փետրվարի 2008 թ.
Պետական գրանցման թիվ 11008049

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

1 փետրվարի 2008 թ.
ք. Երևան

N 60-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ (ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թ. հունվարի 25-ի N 224-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 28.12.2006 թ. N 1025-Ն հրամանի հավելված 1-ի 2-րդ մասի 4-րդ կետի ե) ենթակետի պահանջը՝

Հրամայում եմ

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության նախնական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները)՝ համաձայն հավելվածի:

2. Հրամանի կատարման վերահսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանին:

Նախարար՝

Լ. Մկրտչյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈԻՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ (ՉԱՓԱՆԻՇՆԵՐ)**

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության նախնական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները)

2. Նախնական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի թափուր պաշտոնի հավակնորդը պետք է լինի Հայաստանի Հանրապետության գործունակ չափահաս քաղաքացի, որը տիրապետում է գրական հայերենին և ունի.

1) Բարձրագույն կրթություն:

2) Կրթության ոլորտում առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ (վերջին 10 տարիների ընթացքում), կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա ստաժ, կամ կառավարման ոլորտի առնվազն 5 տարվա ստաժ (վերջին 10 տարիների ընթացքում):

3) ՀՀ Սահմանադրության, աշխատանքային օրենսգրքի, կրթության ոլորտի օրենսդրության և տնօրենի պարտականությունները բխող իրավական ակտերի իմացություն, համապատասխան տեղեկատվության տիրապետում:

4) Առնվազն մեկ օտար լեզվի ազատ տիրապետում:

5) Համակարգչային (առնվազն Word ծրագրով) և այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

(2-րդ կետը լրաց 28.12.11 N 1351-Ն)

(Հավելվածը լրաց 28.12.11 N 1351-Ն)